ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով մարտկոցների մոդուլների /Ապրանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 26.06.2019 ժամը 12.00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Մ. Դավթյանը

**Անդամներ՝**
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Սահակյանը
Մ. Քոչարյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/ Լ. Կարապետյանը
Կ. Եսայանը

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ/ Մ. Նիկողյանը

1. **Հանձնաժողովն արձանագրեց**

**1.1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար Ապրանքի ձեռքբերման նպատակով 14.06.2019 էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով՝ ս.թ. հունիսի 26-ին, ժամը 12.00-ին:

1.2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները.

| N | Մասնակցի անվանումը | էլ. փոստի հասցեն | ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ /26.06 | deltant@mail.ru | 08209436 |
| 2 | Միկրոռինգ ՍՊԸ /25.06 | microring@arminco.com | 00824922 |
| 3 | Էյչ Գրուպ ՍՊԸ /24.06 | khv_84@mail.ru | 01254973 |

**1.3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

1.3.1 Միկրոռինգ ՍՊ, Էյչ Գրուպ ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին /կցվում են/:

1.3.2 ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության մեջ արձանագրվել է անհամապատասխանություն ֆիզիկական անձի /իրական շահառուներ/ տվյալները լրացված են ոչ համապատասխան սյունակներում:

**1.4 Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը.**

| N | Մասնակիցների անվանումը | *1 չափաբաժին /մարտկոցների մոդուլ/* Նախահաշվային գին՝ 5 000 000 ՀՀ դրամ, ներ. ԱԱՀ | | |
|---|---|---|---|---|
| | | արժեք | ԱԱՀ | գումար |
| 1 | ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ | 3 940 000 | 788 000 | 4 728 000 |
| 2 | Միկրոռինգ ՍՊԸ | 3 994 000 | 798 800 | 4 792 800 |
| 3 | Էյչ Գրուպ ՍՊԸ | 4 131 000 | 826 200 | 4 957 200 |

2. Հանձնաժողովը որոշեց

2.1 Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 41-րդ կետի՝ **նիստը կասեցնել** մեկ աշխատանքային օրով՝ մինչև **27.06.2019 ժամը 17.00,** առաջարկելով ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստը շարունակվել է 27.06.2019 թ.

3. Հանձնաժողովը արձանագրեց.

3.1 ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էր անհամապատասխանություն, որը սահմանված ժամկետում շտկվել է:

4. Հանձնաժողովը որոշեց

4.1 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և

1. *ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ-ին 1 չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից.*
2. Մինրորինգ ՍՊԸ-ին ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից.
3. Էյչ Գրուպ ՍՊԸ-ին ճանաչել երրորդ տեղը զբաղեցրած մասնակից.

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից /Կոմիտե/ կատարել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.3 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերությունից, պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 02.07.2019թ., ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ պահանջվող, հրավերով առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիր/՝ նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով /Հրավերի Հավելվածներ 3 և 3.1/

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4.4 Գնահատման նիստը տեղի կունենա Կոմիտեից տեղեկատվություն ստանալուց և որակավորման փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Ս. Դավթյան |
| անդամներ՝ | | Ռ. Սահակյան |
| | | Ս. Քոչարյան |
| | | Լ. Կարապետյան |
| | | Կ. Ենգյան |
| քարտուղար՝ | | Մ. Նիկոլյան |